# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

# Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

“ 22” հունիսի 2012թ. № 42-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ «ԱԳԱՐԱԿԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3-րդ կետի ա/ ենթակետով, <<Հաշվապահական հաշվառման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածի դրույթներով, հիմք ընդունելով «Ագարակի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն՝ Անահիտ Առաքելյանի գրավոր դիմումը,**կ ա ր գ ա դ ր ում ե մ՝**

**1.**2012թ. հունիսի 25-ից լուծել «Ագարակի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Անահիտ Առաքելյանի հետ 2011թվականի հոկտեմբերի 14-ին կնքված N 27 աշխատանքային պայմանագիրը:

Հիմք՝ Ա. Առաքելյանի անձնական դիմումը:

**2.**2012թ. հունիսի 25-ից «Ագարակի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար նշանակել նույն կազմակերպության փոխտնօրեն Էռնա Բարխուդարյանին՝ մինչև ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կազմակերպության տնօրենի պաշտոնի համար մրցույթի անցկացումն ու նշանակումը:

Հիմք՝ Է. Բարխուդարյանի անձնական դիմումը:

**3.**Կազմակերպությունում ակտիվների և պարտավորությունների գույքագրում և հանձնում-ընդունում կատարելու համար ստեղծել հանձնաժողով հետևյալ կազմով.

| | |
|---|---|
| Կոզմանով Կառլեն | Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ (հանձնաժողովի նախագահ) |
| Գրիգորյան Արսեն | Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության կրթության բաժնի պետ |
| Հարությունյան Գայյա | Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնի առաջին կարգի մասնագետ |
| Առաքելյան Անահիտ | «Ագարակի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ նախկին տնօրեն (հանձնող) |
| Բարխուդարյան Էռնա | «Ագարակի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար (ընդունող) |

4.Հանձնաժողովին՝ գույքագրման և հանձնման-ընդունման աշխատանքներն ավարտել 3-օրյա ժամկետում և արդյունքները ներկայացնել քննարկման:

5. ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ղեկավարին. ապահովել սույն կարգադրությունից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

**ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ** **Ս.ԽԱՉԱՏՐՅԱՆ**

2012թ. հունիսի 22
ք. Կապան